ալ կ'աւարտ: Տարի մը վերջ ՆԻԿՈՄԻԴԻԱ կու գան հաստատուիլ: — Աբրահամ պան մը փերեզակուբիւն կ'ընե, մինչեւ իր հօրը մահը (1848): Հոն **ձեռագիր** հրատարակուող Համբ. Բերովբէեանի «Սուրհանդակ» գաւեշտաբերբն ու Յովհ. Մկրեանի «Բանբեր Պարտիզակեան»ը գրգիռ կ'ըլլան Աբրահամի՝ **տպագիր** բերբի մը հրատարակութեան: Գաղափարը կ'իրականանայ 1 Մայիս 1850 ին, երբ **Հայրենասէր**ի Ա. թիւը լոյս կը տեսնէ (ընդ. ամենն 3 օրինակ): Տպարանն իր կրպակին ետեւը հաստատած էր և շատ կը նեղուէր տառերու անբաւականութենէն, մինչեւ որ Ռշտունի Յովհ. Վրդ.ի բարեխօսութեամբ և Տատեան Յովհ. Ամիրայի աջակցութեամբ տպագրատեր պատանին բախտը կ'ունենայ տիրանալու փայտէ պզտիկ մամուլի մը և կապարեայ բաղձալի տառերուն՝ բարեսիրաբար հայթայթուած Յ. Միւհենտիսեանէ: «Հայրենասէր» 3 տարուան կեանք մը միայն ունեցաւ՝ բաժանորդներու օրըստօրեայ ցանցառութենէն, որովհետեւ տեղական լուրերէ դուրս համբակներու գրուածքներով կը լեցուէր թերթը: Տպարանն այնուհետեւ Յովհ. Մարգարեան գնելով ՍԿԻԻԹԱՐ կը փոխադրէ և գիրք մը միայն տպել կու տայ: — Մուրատեան հրաւիրելով Կ. Ս. Իւթիւճեանէ՝ վերին հսկողութիւնը կ'ստանձնէ անոր տպարանին, զոր կը կազմակերպէ. սակայն գրաշարներու մախանքէն զգուած՝ կը դառնայ Իզմիր, յետոյ կրկին Պոլիս՝ ուր Ֆրանսերէնի կ'աշխատի և 1857 ին կ'ընկերանայ իր բարգման ու գործակից՝ վաճառականութեամբ Ֆրանսա մեկնող Յովհ.ի հայր՝ Մարտիրոս Մարգարեանի որուն գործը տարիէ մը աւելի ետեւ, Աբրահամ Մարսիլիայէն կ'անցնի ԲԱՐԻԶ 1859 Յունիսին, Ճ. Արամեանի տպարանը պաշտօն մը խնդրելու: Ստ. Ոսկան նոյն ատենները դադրեցուցած էր 1855 ին սկսած իր **Արեւելք**ը: Ճանիկի խորհուրդով Աբրահամ 6 Յնվր. **1860** ին կ'սկսի հրատարակել **Փարիզ** առեւտր. հանդէսը: Արամեանի հոնկէ մեկնելուն պատճառաւ՝ Աբրահամ կ'ստիպուի Կ. Վ. Շահնազարեանէ գնել հայերէն գիրեր և իր շարածը դրոշմել Գառիօնի տպարանը: Յետոյ կը ձուլէ նոր տառեր՝ իր պատրաստած մայր-տառերուն վրայ: Այս յոգնութիւններէն ընկճուած, թերթը **1863** Սեպտ.ին դադրեցուցնելով՝ կ'անցնի ԵԳԻՊՏՈՍ, կազդուրուելու համար: Գանիրէ տեսուչ կը կարգուի Խորենեան վարժարանի: Եգիպտահայ ջոջերու բեւեռդրութեամբ, Կիւրէմպէրկի այս ուխտեալ աշակերտը կը փարի նորէն տպարանական կեանքին և Ֆրանսա բռնուցած կազմածքը բերել տալով կ'սկսի հրատարակել **Արմաւենի** կիսամսեայ հանդէսը, 16 Մարտ 1865 ին: Հնդկաստին հետեւանօք թերթը կը դադրի: 1870 թ. Պոլիս դարձին՝ կը թարգմանէ Միշլէի **Սէր**ը (տպ. Պետր. Ճեզվէճեան): Նետուելով այս անգամ ուսուցչական ասպարէզ, կը դասախօսէ յաջորդաբար Մեզպուրեան, Արամեան, Մայր և Ս. Փրկչեան վարժարանները՝ մինչեւ իր մահը (Սեպտ. 1903, Այ-Սրէֆանօ): — 1877 ին Եգիպտահայերէ երեսփոխան ընտրուելով՝ 13 տարի անդամակցած է Ազգ. Ժողովին:

ԱԲՐ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԵՒԿԱՐԴԻՒ [ԹՕՔԹՈՏ] ԵՒ ԱՐԱՔԵԼ. —

Նիկոմիդիոյ մէջ առաջին տպագրիչը եղած է բազմարդիւն ԱԲՐԱՀԱՄ ՄՈՒՐԱՏԵԱՆ (**207** Բ. բուանամար), որուն տպարանական գործունէութիւնը պատկերացուցած ենք ԵՐՈՒՍԱՂԷՄի բաժինին մէջ: — Ա. Մուրատեանէ վերջ՝ 1879ին սկսեալ մինչեւ այսօր Արմաշէն վարձու առած մամուլով գործած է ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՎԵԱՆ (**208** բուանամար) որ տառ. չունենալուն՝ ծխախոտի գործարանաց յատուկ ծրարներու պիտակներ միայն կը տպագրէր: Ծխախոտը Ռէժիի վերածուելուն, Մավեան կ'ստիպուի տառեր գնել և կառավարական ևն. բդրոց տպագրութեամբ պարապիլ, գրաղ՝ում զոր ցարդ կը շարունակէ: — Տարւոյս սկիզբէն՝ Իզմիրցի ՕՆՆԻԿ Տ. ԱԶԱՐԵԱՆ (**209** բուանամար) կ'ունենայ ան իր մամուլն ու տառերը՝ մանր գործերու յատկացեալ: